ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 31

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10-ը հուլիսի, 2018թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը: Նիստին նեկրա էին նաև ՀՀ Տավուշի մարզի փոխմարզպետ Տ. Թամրազյանը, մարզպետի խորհրդական Ա. Գալստյանը, ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչները և կրթական ծրագրերի ղեկավարները:

Նիստը վարում էր ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Ցուցուլյանը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Վ. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի 2017-2018 ուստարվա գործունեության մասին: **(Զեկուցող Մ. Ճաղարյան**)
2. ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

   (**Զեկուցող Ա. Դավթյան**)
3. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2018թ. հարցման արդյունքների մասին: (**Զեկուցող Մ. Ճաղարյան**)

4. ԵՊՀ ԻՄ-ի 2019-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:

   (**Զեկուցող Ա. Ցուցուլյան**)

5. Ընթացիկ հարցեր

   5.1. ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական աշխատանքային նորմերի մասին:

   (**Զեկուցող Ա. Դավթյան**)

   5.2. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային փոփոխությունների մասին:

   (**Զեկուցող Ա. Ցուցուլյան**)

   5.3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին:

   (**Զեկուցող Ա. Ցուցուլյան**)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ « ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի 2017-2018 ուստարվա գործունեության մասին » հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի զեկույցը.

«Որակյալ ուսուցման ապահովման ռազմավարական առաջնահերթ խնդրի իրականացման գրավականը մասնաճյուղում դեռևս 2009թ.-ից ներդրված **որակի ներքին ապահովման համակարգն է:** ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքին համապատասխան՝ այդ գործընթացները համակարգվում և իրականացվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից՝ Որակի կառավարման հանձնաժողովի մշտական աջակցությամբ:

Բաժինն իր գործունեությունը պլանավորում է կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականության և մասնաճյուղի զարգացման 2016-20թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա:

Բաժնի աշխատանքային պլանը ներառել է ընթացիկ ուսումնական տարում իրականացվելիք գործողություններն ըստ ռազմավարական ծրագրի համապատասխան նպատակների, դրանք են.

-մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՑ-ի) վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,

- “Դասընթացների փաթեթներ”-ի մշակման վերաբերյալ խորհրդատվության պարբերաբար տրամադրում,

- կրթական ծրագրերի ղեկավարների և ամբիոնների հետ մշտական բովանդակային աշխատանքի իրականացում,

- արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, հավաքագրված տվյալների վերլուծություն, առաջարկությունների փաթեթների մշակում,

- ներքին գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ավտոմատ համակարգերի աշխատանքի վերաբերյալ խորհրդատվության ապահովում,

- մասնաճյուղի գործունեության թափանցիկության ապահովում. տեղեկատվության տարածում, պաշտոնական կայքի արդյունավետության բարելավում և այլն:

Հաշվետու ուստարում որոշ տեխնիկական խնդիրների պատճառով բաժնի գործունեությունը ըստ պլանի ես համարում եմ ոչ լիարժեք. նախատեսված աշխատանքների հիմնական մասը բաժինն ավարտին է հասցրել, կան

պարբերաբար իրականացվող գործընթացներ, որոնք նույնպես եղել են ուշադրության կենտրոնում և իրականացվել են պատշաճ մակարդակով: Սակայն եղել են նաև գործընթացներ, որոնք մնացել են թերի: Բաժնի ամբողջ գործունեությունն ամրագրվել է արձանագրություններում:

2017-18 ուստարում բաժնի գործունեությունն իրականացվել է 4 հիմնական ուղղություններով.

1. Բաժնի առաջնահերթ ռազմավարական խնդիրներից մեկը մշտապես համագործակցությունն է **կրթական ծրագրերի ղեկավարների հետ:** Բաժինն ամբողջ ուստարվա ընթացքում աշխատել է 2018-19 ուստարվա բակալավրի կրթական ծրագրեր մշակող 9 աշխատանքային խմբերի հետ, մասնավորապես կրթական ծրագրերի առաջարկի հայտերի մշակման, արտոնման և հաստատման գործընթացի շրջանակներում, խորհրդատվություններով **աջակցել է** նրանց՝ կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին համապատասխան վերանայելու, բակալավրի կրթական ծրագրերը դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցվածության տարրերով ապահովելու առումով /ՌԾ 1.2.4/:

Տնօրենի խորհրդական պարոն Ա.Մակարյանի անմիջական ղեկավարությամբ և խորհրդատվությամբ բաժինը **կազմակերպել է** հանդիպումներ կրթական ծրագրերի ղեկավարների, ֆակուլտետների դեկանների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի և դրան համապատասխան կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևակերպման վերաբերյալ հարցեր, քննարկվել են նաև կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը վերաբերող հարցեր: Բաժինը նրանց մշտապես ապահովել է համապատասխան մեթոդական նյութերով:

Ըստ մշակված ժամանակացույցի իրականացվել է ծրագրերի առաջարկի հայտերի ձևակերպումները, որոնք նայվել են բաժնում, ապա ներկայացվել են

կրթական ծրագրերն արտոնող հանձնաժողով՝ հաստատման, որից հետո աշխատանքային խմբերը պատրաստել են ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթը՝ ծրագրի ուսումնական պլան, ծրագրի մասնագիր և բաղկացուցիչ ուսումնական մոդուլների նկարագրիչներ, ըստ սահմանված ձևաչափերի և գործող պահանջների: ՄԿՈԱ բաժինը ստուգել է ծրագրերի փաստաթղթային փաթեթները, աշխատանքային խմբերի հետ համատեղ աշխատանքի արդյունքում կազմվել են կրթական ծրագրերը և ներկայացվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար:

2. Երկրորդ ռազմավարական խնդիրը **“Դասընթացների փաթեթներ”**-ի վերաբերյալ խորհրդատվության պարբերաբար իրականացումն է /ՌԾ 1.2.5/: Դեռևս 2014թ-ի սեպտեմբերից մասնաճյուղում ներդրվել են դասընթացների փաթեթները, որոնց ամբողջական ներդրման գործընթացը մի շարք մասնագիտությունների համար ավարտվեց 2017-18 ուստարվա երկրորդ կիսամյակով, նոր մասնագիտությունների համար այն շարունակվում է: Հաշվետու ուստարվա ընթացքում բացի պարբերաբար խորհրդատվական աշխատանքներից բաժինը երկու անգամ տեղում՝ ամբիոններում ուսումնասիրել է փաթեթների հետ կապված խնդիրները, պարզաբանել որոշ դեպքերում դրանց բացակայության պատճառները, նշել եղած փաթեթներում առկա խնդիրները և այլն:

Պորտֆոլիոյի ձևավորումը նախատեսում է փաստաթղթերի համակարգված և կազմակերպված հավաքագրում, այն սիստեմատիկ գործընթաց է: Հաշվետու ուստարում բաժնի կողմից մշակվել են <u>**դասընթացների փաթեթների պատրաստման ուղեցույցի 2-րդ և 3-րդ բաժինները**</u>: Եթե 1-ին բաժնի փաստաթղթերի առկայությունը վկայում է, որ դասավանդողը մանրամասնորեն պլանավորել է իր մասնագիտական գործունեությունը դասընթացի շրջանակներում, ապա փաթեթի 2-րդ և 3-րդ բաժինները հանդես են գալու որպես դասընթացների գնահատման և

բարելավման տեղեկատվական աղբյուր: Մշակված ուղեցույցները նոր ուսումնական տարվա սկզբից կուղարկվեն ամբիոններ քննարկման, դիտողությունների և առաջարկների համար:

3. Բաժնի երրորդ ռազմավարական խնդիրը տարբեր մեխանիզմներով մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների **կարիքների ուսումնասիրությունն է,** խնդիրների հավաքագրումը, վերլուծումը և գնահատումը /ՌԾ 6.1.1, 1.3.6/: Հաշվետու ուստարում բացի առցանց եղանակով իրականացված ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներից և ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումներից բաժինն առցանց իրականացրել է մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցում 1-3 կուրսերի բոլոր ուսանողների շրջանում: Հարցումն ընդգրկել է 3 բաժին. բավարարվածությունը մասնաճյուղից, պրակտիկաների կազմակերպումից և մասնաճյուղում ուսանողների գնահատումից: Նշենք, որ նախորդ տարիներին բաժնի կողմից մշտապես իրականացվել են 8-9 հարցում, ներառյալ շրջանավարտներից և պրակտիկանտ ուսանողներից արտաքին շահակիցների բավարարվածության, մասնաճյուղից և ուսանողների գնահատումից պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության, մասնաճյուղում գիտական միջավայրի վերաբերյալ ուսումնասիրությունները և այլն:

Բաժինը հաշվետու ուստարվա օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին կատարել է նշված հարցումների արդյունքների վերլուծություն, կազմել է համապատասխան հաշվետվություններ, արդյունքներն ուղարկվել են ամբիոններ, տեղադրվել են կայքում՝ ապահովելով նրանց հրապարակայնությունը:

Քանի որ մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցումներն անց են կացվել ընթացիկ ուստարվա ապրիլ-մայիս ամիսներին, ապա դրանք կմշակվեն 2018թ.-ի սեպտեմբերին:

Բաժինը ՈՒՄՎ-ից ստացել է մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները, կատարել է այդ արդյունքների վերլուծություն, նաև համեմատական վերլուծություն նախորդ ուստարիների նույն հարցման արդյունքների հետ, կազմել է հաշվետվություն, ամփոփ արդյունքներն ըստ ֆակուլտետների կուղարկվեն ամբիոններ՝ քննարկման համար:

Նշենք, որ ռազմավարական այս խնդրի շրջանակներում բաժինը տարբեր մեխանիզմներով իրականացրած ուսումնասիրություններից հավաքագրված կարծիքների և առաջարկությունների հիման վրա կազմել է առաջարկությունների փաթեթ, ներկայացրել տնօրենին, ընդ որում ներառված առաջարկությունների զգալի մասը ստացել են իրենց լուծումները:

4. Ընթացիկ ուստարում բաժնի կարևոր ձեռքբերումը **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում** (գիտաուսումնական մտորումներ և փաստեր)» գրքի հրատարակումն էր պարոն Առաքելյանի և բաժնի աշխատակիցներ՝ Մ.Ճաղարյանի և Է.Կյուրեղյանի հեղինակությամբ: Աշխատանքում ներկայացված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում վերջին 5 տարվա ընթացքում անցկացված շահակիցների կարծիքների ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց վերլուծությունը: Գրքում ներկայացված են այդ ուսումնասիրությունների արդյունքները, նրանց համեմատական վերլուծությունները, ինչը թերևս կարելի է անվանել ուսանողական մեկ սերնդի գնահատականը մասնաճյուղի գործունեությանը:

Հեղինակների նպատակն է եղել՝ բարելավել սովորողների և աշխատակիցների սոցիոլոգիական մշակույթը, դրանով իսկ մեծացնել հասարակական կարծիքի հավաստիությունը և, ինչպես նաև մասնաճյուղի ղեկավարությանն օժանդակել կրթօջախի ուսումնակազմակերպչական

խնդիրների բացահայտման, դրանց լուծման տարբերակների առաջադրման և մասնագիտական կրթության պատշաճ որակի ապահովման հարցերում:

5. Բաժինը վերջին 5 տարիների ընթացքում հաշվետվության հատուկ ձևաթերթի միջոցով հավաքագրում է **ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքները և առաջարկները**: Այդ հաշվետվության մեջ նախագահները գնահատել և վերլուծել են շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, բնութագրել ավարտական աշխատանքների թեմաները, դրանց արդիականությունը և համապատասխանությունը որակավորմանը, շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունները: Բաժինն ուսումնասիրել է բոլոր հանձնաժողովների կարծիքները և առաջարկները, կատարել է վերլուծություն ըստ մասնագիտությունների, ապա ամփոփել մասնաճյուղի համար: Առանձնացվել են մասնաճյուղի գործունեության արդյունավետության աճին ուղղված առաջարկները, որոնք վերաբերել են հարցաշարերի և ավարտական աշխատանքների թեմատիկայի արդիականացմանը, անդրադառնում են տարածաշրջանային հիմնախնդիրներին, լաբորատոր բազայի կատարելագործմանն ու պրակտիկաների ավելի արդյունավետ ու նպատակաուղղված անցկացմանը: Կազմվել են հաշվետվություններ, որոնք կտեղադրվեն կայքում, իսկ առանձին մասնագիտությունների համար կատարված վերլուծությունները կտրամադրվեն համապատասխան ամբիոններին:

6. Ռազմավարական հաջորդ կարևոր խնդիրներից մեկը մասնաճյուղի միջազգայնացման խնդիրն է, որի ապահովման առաջնահերթ գործիք է **մասնաճյուղի կայք-էջի եռալեզու** տարբերակի գործակումը /ՌԾ 9.1.3, 8.4.6/: 2018թ.-ի մարտ-ապրիլ ամիսներին ամբողջությամբ խմբագրվել են կայքի անգլալեզու և ռուսալեզու էջերը, հիմնական փաստաթղթերի, հայտարարությունների և նորությունների օտարալեզու տարբերակների տեղադրումը կիրականացվի նոր ուսումնական տարվա սկզբից: Նշենք, որ

բաժինը մշտապես աշխատել է կայքէջի բովանդակության բարելավման ուղղությամբ՝ հասարակությանը ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովելու համար:

7. Բաժինը հաշվետու ուստարում ***իրականացրել է*** մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2016-17թթ.-ի մասնաճյուղի կատարողականի վերլուծություն: 2017թ. նոյեմբերին բաժինը ***հավաքագրել է*** մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները՝ 2016-17 ուստարում նրանց գործունեության և 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2016-17թթ.-ի կատարողականի վերաբերյալ: Նշենք, որ ստորաբաժանումները ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծությունն իրականացրել են բաժնի կողմից մշակված հատուկ ձևաչափով: Բաժինը հավաքագրված տեղեկատվության հիման վրա ***կազմել է*** 2016-17 ուստարում ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ զեկույց, ապահովել նրա հրապարակայնությունը (տեղադրվել է մասնաճյուղի կայք-էջում), կազմակերպվել է զեկույցի տպագրումը, որի օրինակները տրվել են բոլոր ստորաբաժանումներին:

8. Բաժնի նախաձեռնությամբ և մասնաճյուղի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը ապրիլի 19-ից մայիսի 19-ը մասնաճյուղի ամբիոններում իրականացրել է **ներքին աուդիտ** ըստ նախապես մշակված ծրագրի և ժամանակացույցի:

Աուդիտի աշխատանքային խմբի կազմում մասնագիտական կրթության որակի բաժնի նպատակն էր.

- ուսումնասիրել ամբիոնների գործունեությունը աշխատանքների ռազմավարական պլանավորման և իրականացման, ամբիոնի գործունեության բարելավման, կրթական ծրագրերի մշակման ու նրանց բարելավման ընթացքում առկա խնդիրների և նրանց լուծման ուղղությամբ,

- նրանց տրամադրել համապատասխան խորհրդատվություն գործունեության տարբեր ասպեկտների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ,
- նպաստել ամբիոնների, կրթական ծրագրերի ղեկավարների և տարբեր ստորաբաժանումների միջև համագործակցության ավելի արդյունավետ կազմակերպմանը՝ համապատասխան ձևաթղթերով, պլան-ժամանակացույցերով և այլն:

Հաշվի առնելով աուդիտի ընթացքում հավաքագրված խնդիրները ՄԿՈԱ բաժինը մշակել է հատուկ ուղեցույց և փաստաթղթերի փաթեթ, որոնք նպատակ ունեն օգնել ամբիոնների վարիչներին ճիշտ և արդյունավետ կազմակերպել ամբիոնների գործունեության պլանավորումը, իրականացումը և գնահատումը, հաշվետվողականությունը, ամբիոնների և մասնավորապես ՄԿՈԱ բաժնի միջև փաստաթղթաշրջանառության կազմակերպումն ըստ հստակ ժամանակացույցի: Բաժինը փաթեթը ամբիոններին կներկայացնի նոր ուսումնական տարվա սկզբին:

9. Բաժինը մշտապես ապահովել է ներքին գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ավտոմատ համակարգերի (ֆակուլտետների դեկանատներում, անձնակազմի կառավարման բաժնում, ուսումնամեթոդական վարչությունում) անխափան աշխատանքը:

10. Բաժնի մասնագետ, շրջանավարտների ու կարիերայի աշխատանքները համակարգող Ա.Եգանյանը շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2016-20 ռազմավարական պլանավորման շրջանակներում իրականացրել է կազմակերպչական, շրջանավարտներին և գործատուներին աջակցելու նպատակային կոնկրետ գործունեություն:

Նշենք, որ դեռևս 2014թ.-ից գործադրված է մասնաճյուղի շրջանավարտների տվյալների բազա, որում գրացված են 2010-2017թթ. շրջանավարտների տվյալները (2828 շրջանավարտի տվյալներ, այդ թվում՝ 1400 առկա ուսուցման համակարգից, 1428-ը՝ հեռակա ուսուսման

համակարգից), 2018թ. շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը բազային կավելացվի հաջորդ ուստարվա սկզբին: Այդ տվյալները մշտապես թարմացվում են: ՈՒ քանի որ բազան բավականին տեղեկատվություն է ներառում շրջանավարտների և նրանց ընթացիկ զբաղվածության վերաբերյալ հաջողությամբ ծառայում է և գործատուների, և շրջանավարտների հետ ակտիվ համագործակցությանը:

2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին Եգանյանն իրականացրել է հարցում՝ վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածությունը վերլուծելու նպատակով:Այդ վերուծության արդյունքները տրամադրվել են կրթական ծրագրերի ղեկավարներին՝ ծրագրերի առաջարկի հայտերում նոր ծրագրի հիմնավորման համար:

Կենտրոնի, ի դեմս շրջանավարտների և կարիերայի աշխատանքները համակարգող Ա.Եգանյանի անմիջական աջակցությամբ.

- մասնաճյուղի 4 շրջանավարտներ աշխատանքի են անցել,

- մասնաճյուղի կայքի միջոցով կազմակերպվել է տարբեր կազմակերպություններում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարարությունների տարածումը,

- 2017թ. դեկտեմբերի 16-ին կազմակերպվել է հանդիպում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատողների հետ, որոնք հանդես են եկել ակնարկային դասախոսություններով՝ քննարկելով բուհ-աշխատաշուկա կապի հնարավոր զարգացումները, անձի մասնագիտական գործունեության ընթացքում կարիերային նպաստող և խոչընդոտող հոգեբանական գործոնները, ուսանողների՝ որպես հետագա մասնագետների ինքնորոշման, մանկավարժական հմտություններ դրսևորելու, մասնավորապես՝ ուսանողների մեջ ստեղծագործական կարողություններ զարգացնելու խնդիրները:

- 2018թ. մայիսին կազմկերպվել է հանդիպում Բագրատաշենի սահանապահ զորքերի ներկայացուցիչների հետ, տեղի է ունեցել քննարկում նրանց գործունեության վերաբերյալ և նրանց կողմից կատարվել է աշխատանքի առաջարկ մեր շրջանավարտ-ուսանողներին,

- ՈՒԳԸ համակարգող Սլավիկ Ալավերդյանի և Ուսանողական խորհրդի համատեղ նախաձեռնությամբ բարձր կուրսերի ուսանողների համար պարբերաբար անց են կացվել ապագա կարիերայի կազմակերպման վերաբերյալ տարբեր սեմինար-դասընթացներ,

Նշենք, որ շրջանավարտների և կարիերայի կենտրոնն ունի իր ֆեյսբուքյան էջը, որին հետևում են շուրջ 300 օգտատեր:

Կենտրոնը բանակցություններ է վարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի Իջևանի մասնաճյուղի հետ՝ ինտերնշիփային ծրագիր իրականացնելու նպատակով, որին մասնակցություն են ունեցել ավարտական կուրսի 12 ուսանողներ: Համագործակցությունը, սակայն միակողմանիորեն դադարեցվել է:

Այժմ նշենք ՄԿՈԱ բաժնի այն գործընթացները, որոնք առաջնահերթ են, պլանավորված էին, սակայն չեն իրականացվել.

- Չեն մշակվել մասնաճյուղի շրջանավարտների կողմից մասնաճյուղին և առանձին ֆակուլտետներին տարաբնույթ աջակցության տրամադրման մեխանիզմներ, շրջանավարտների աշխատանքները համակարգողի և մի քանի երիտասարդ ու մասնաճյուղի նախկին շրջանավարտ-աշխատակիցների կողմից փորձ է արվել ստեղծել շրջանավարտների միություն, այդ գործընթացն առայժմ ավարտին չի հասցվել:
- Չեն մշակվել մասնաճյուղի կառավարման գործընթացներում ուսանողների արդյունավետ ներգրավման և նրանց աշխատանքի ակտիվացման ընթացակարգեր,

- Ի տարբերություն նախորդ ուստարվա, հաշվետու տարում չգործեց «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնը», որը նաև ծառայում էր մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման, ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: ››

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Ցուցուլյանը, Տեսական տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ. պրոֆեսոր Մ. Միքայելյանը:

Արտահայտվողները բաժնի կատարած աշխատանքները 2017-2018 ուսումնական տարում համարեցին բավարար:

Որոշեցին

Որոշում 31/1

1. Ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը.

‹‹2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորումն իրականացվել է համաձայն հաստատված գրաֆիկի՝ սույն թվականի մայիսի 12-ից մինչև 30-ը: Ի տարբերություն նախորդ տարիների՝ գործընթացը ներառել է միայն ավարտական աշխատանքների պաշտպանությունը և ընթացել է առանց քննակարգի խախտումների:

2017-2018 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է ընդհանուր **271 շրջանավարտ**, այդ թվում առկա ուսուցմամբ՝ 138 շրջանավարտ (39 անվճար, 99 վճարովի) և հեռակա ուսուցմամբ՝ 133 շրջանավարտ (3-ը նախորդ տարիներից):

Ֆակուլտետների ամփոփմամբ թե՛ առկա թե հեռակա ուսուցման համակարգում մեծ թվով շրջանավարտներ ունեցել են հումանիտար և տնտեսագիտական ֆակուլտետները:

Ըստ մասնագիտությունների առկա ուսուցման համակարգում նախորդ ուստարվա շրջանավարտների թվի համեմատությամբ ավելի շատ շրջանավարտներ ունեցել ենք *Պատմություն*, *Ֆրանսերեն լեզու և գրականություն*, *Ընդհանուր Տնտեսագիտություն* մասնագիտություններով:

Հեռակա ուսուցման համակարգում թեև նախորդ ուստարվա համեմատ ունեցել ենք ոչ թե 7 այլ 8 մասնագիտություններ, այնուամենայնիվ շրջանավարտների թիվը զիջել է բոլոր մասնագիտություններում:

Գերազանցության դիպլոմ առկա ուսուցմամբ ստացել են 20 շրջանավարտներ: Թվական տվյալներով առանձնանում են *Սերվիս* և *Ընդհանուր Տնտեսագիտություն* մասնագիտությունները, իսկ Հումանիտար ֆակուլտետում՝ *Մանկավարժություն և հոգեբանություն* մասնագիտությունը: Նախորդ ուստարվա համեմատ քիչ են եղել գերազանցության դիպլոմով շրջանավարտներ *Պատմություն, Անգլերեն լեզու և գրականություն* մասնագիտություններում: Վերջին երկու տարիներին գերազանցության դիպլոմ չեն ստացել *Կիրառական արվեստի* շրջանավարտները:

Հեռակա ուսուցման համակարգում նախորդ տարիների համեմատ այս տարի ունեցել ենք գերազանցության դիպլոմով 2 շրջանավարտ՝ *Անգլերեն լեզու և գրականություն, Էկոլոգիական քիմիա* մասնագիտություններում:

Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով առկա ուսուցման համակարգում նախորդ ուստարվա համեմատ աճ գրանցվել է գրեթե բոլոր մասնագիտություններում, որը պայմանավորված է միայն ավարտական աշխատանքների կատարման պահանջով: Քիչ տարբերությամբ զիջում են *Սերվիս, Անգլերեն լեզու և գրականություն* մասնագիտությունները:

Հեռակա ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով նախորդ ուստարվա համեմատ զիջում է *Մանկա-*

վարժություն և հոգեբանություն մասնագիտությունը և ամենացածր ցուցանիշը գրանցվել է *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* մասնագիտությունում, որը պայմանավորված է շրջանավարտների կարողություններով:

Առաջին փուլով մագիստրատուրա կրթական աստիճանում ուսումը շարունակելու համար հայտ են ներկայացրել 14 շրջանավարտներ, որոնցից 4-ը *Ընդհանուր Տնտեսագիտությունից*: Հումանիտար գիտությունների ֆակուլտետի *Մանկավարժություն և հոգեբանություն*, *Պատմություն*, *Անգլերեն լեզու և գրականություն* մասնագիտությամբ գերազանցության դիպլոմով չորս շրջանավարտ տղաներ մասնակցել են Գիտության և կրթության նախարարության կողմից կազմակերպված մրցույթին և ձեռք բերել տարեկետման իրավունք:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացված հաշվետվությունները քննարկվել են թե՛ մասնագիտական ամբիոններում, թե՛ ֆակուլտետների խորհուրդներում: Արտահայտված կարծիքների ամբողջացմամբ

ա) դասավանդման գործընթացը մասնաճյուղում ընթանում է չափորոշիչներին համապատասխան և գիտելիքների մակարդակը համապատասխանում է բակալավր կրթական աստիճանի որակավորման չափորոշիչներին,

բ) 2017-2018 ուստարվա շրջանավարտների գիտելիքների ընդհանուր մակարդակը եղել է գոհացուցիչ, ինչն արտահայտվել է առանձնապես գերազանց գիտելիքներով օժտված ուսանողների պատասխաններում,

գ) պաշտպանության ներկայացված թեմաները ունեցել են պահանջվող գիտականություն, չափորոշիչներին համապատասխան շարադրանք, արդիականություն:

Առաջարկությունները.

ա) ավարտական աշխատանքների թեմաների ընտրությունում արդիական հիմնախնդիրները (ընդհանուր և տարածաշրջանային) համարել առաջնային, որը հնարավորություն կտա շրջանավարտին ցուցաբերելու իր ինքնուրույնությունը, նորարարական մոտեցումները, հետազոտական կարողությունները և այլն,

բ) ավարտական աշխատանքների կատարողականում առավել կարևորել ուսումնասիրվող թեմայի կիրառելիությունը, գործնական վերլուծությունները:››

ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների համեմատական վերլուծությունը տես հավելված 1-ում:

Որոշեցին

Որոշում 31/2

1. Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երրորդ՝</u> ‹‹ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2018թ. հարցման արդյունքների մասին›› հարցի վերաբերյալ լսվեց ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյան մասնավորապես նշեց, հարցումները այս տարի կատարվել է նաև ԵՊՀ –ի կողմից առցանց, և վերլուծվել է միայն ԵՊՀ-ի կողմից կատարված հարցումները:

Հաշվետվությունը ամբողջությամբ ներկայացված է հավելված 2-ում:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված ելույթին և շնորհակալություն հայտնեցին կատարված բարեխիղճ աշխատանքի համար:

Որոշեցին

Որոշում 31/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> ‹‹ԵՊՀ ԻՄ-ի 2019-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ տարիներ շարունակ փորձել ենք տարբեր կրթական ծրագրեր ներմուծել առաջնորդվելով հարցումների և վերլուծությունների արդյունքներով, ինչպես նաև ՄԿՊԿ բաժնի վարիչ Վ. Աղաբաբյանի ակտիվ աշխատանքի արդյունքներով: Այս պահի դրությամբ մեր ունեցածները նույն են, ունեինք հավատարմագրած կրթական ծրագիր սոցիալական աշխատանք, որը չկայացավ, ունենք նաև նախնական զինվորական պատրաստություն, որը նույնպես չի կայացել, և ըստ էության մեր ցանկը նույնն է. ընդհանուր մանկավարժություն, դիզայն, պատմություն, ՀԼԳ, ՕԼԳ, ֆինանսներ, աշխարհագրություն, ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, սոցիալական աշխատանք և զբոսաշրջություն: ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ մասնագիտությունների ամբողջական ցանկը ներկայացվելու է նախարարություն մինչև 2018թ.-ի նոյեմբերի 10-ը: Բոլոր պատկան ստորաբաժանումներին և անհատներին կոչ ենք անում առաջիկա գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել առաջարկներ տարբեր մասնագիտություններով կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ մինչև հիշյալ պրոցեսի ամբողջական կանոնակարգումը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր Վ. Բրուտյանը, դոցենտ Լ. Սարգսյանը, ՄԿՊԿ բաժնի վարիչ Վ. Աղաբաբյանը, կրթական ծրագրի ղեկավար Ա. Չիբուխչյանը:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր **Վ. Բրուտյանը** նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում նպատակահարմար է իրականացնել սոցիալական մանկավարժություն կրթական ծրագիրը, որի շրջանավարտները կարող են աշխատել մարզի դպրոցներում, մանկապարտեզներում, Սոս մանկական գյուղում և այլուր, մյուս կողմից Վ. Բրուտյանը կարծիք հայտնեց, որ հոգեբանություն մասնագիտությունը հեռակա ուսուցմամբ լավ աշխատում է, կարելի է իրականացնել նաև առկա ուսուցմամբ, ժամանակն է նաև ԵՊՀ ԻՄ-ում ունենալու առնվազն երկու կրթական ծրագրերով մագիստրատուրա՝ կրթության կազմակերպում և կառավարում, կարելի է նաև ներդնել հատուկ մանկավարժություն կրթական ծրագիրը՝ բոլոր դպրոցներում կան հատուկ մանկավարժների կարիք, մեր շատ նախկին շրջանավարտներ և դպրոցների ուսուցիչներ, տնօրեններ կցանկանան ուսումը շարունակել այս ուղղվածություններով, որի անհրաժեշտ կադրային բազան ԵՊՀ ԻՄ-ը ունի:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ **Լ. Սարգսյանը** հավելեց, որ ԵՊՀ ԻՄ-ում հոգեբանության հիմքերը լավ դրված էին և լավ գործում էր, մյուս կողմից կան փաստեր, որ ամբողջ ՀՀ-ում սոցաիալական աշխատանք և սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ դիմորդների քանակը բավականին քիչ է, իսկ հոգեբանություն մասնագիտությամբ կա դիմորդների լուրջ քանակ ի տարբերություն մանկավարժության:

ՄԿՊԿ բաժնի վարիչ **Վ. Աղաբաբյանը** նշեց, որ Տավուշի մարզում կա նաև ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների կարիք, Տավուշի մարզում

ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների միջին տարիքը 50-ից բարձր է, Տավուշի մարզի դպրոցների կեսից ավելին ունի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների կարիք:

Դիզայն մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար **Ա. Չիբուխչյանը** նշեց, որ լավ կլինի նաև հետ բերել կիրառական արվեստ մասնագիտությունը:

Վերջում ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ լրացուցիչ ուսումնասիրության կարիք կա, և ուսումնասիրություն կատարելուց հետո այդ արդյունքները կամփոփենք առաջիկա գիտխորհրդի նիստերից մեկում մինչև 2018թ.-ի նոյեմբերի տասը:

Որոշեցին

Որոշում 31/4

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

5.1 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական աշխատանքային նորմերի մասին›› հարցի վերաբերյալ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա նշեց, որ մենք պետք է առաջնորդվենք ԵՊՀ –ի ուսումնական աշխատանքային նորմերի համաձայն, սակայն մենք նախկինում կատարել ենք որոշ փոփոխություններ և պետք է վերադառնանք ԵՊՀ –ի ուսումնական աշխատանքային նորմերին:

Որոշեցին

Որոշում 31/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկների համար հիմք ընդունել Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի թիվ 23 (2017թ. ապրիլի 8) նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5.2 Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխությունների մասին» հարցի վերաբերյալ:

Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի հետ տարվող գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է կատարել որոշ կառուցվածքային փոփոխություններ (կառուցվածքի սխեման տես հավելված 4): Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ նախատեսվում է ունենալ ուսումնական գծով փոխտնօրեն, որը կհամակարգի ԵՊՀ ԻՄ-ի ներքին շփումների հետ կապված գործառույթները, և կազմակերպական գծով փոխտնօրեն, որը կհամակարգի ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շփումների հետ սերտ առնչվող գործառույթները՝ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին, բիզնես ծրագրերի և հանրությանը մատուցվող վճարովի ծառայությունների համակարգող, հասարակական կարծիքի ուսումնասիրման

և կարիերայի պատասխանատու, արտաքին կապերի բաժին, մշակույթի կենտրոն և այլն(մանրամասն տես հավելված 4-ի գծապատկերում):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր Վ. Բրուտյանը, ՄԿՊԿ բաժնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիմոնյանը, Արհբյուրոյի նախագահ, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.թ. Ա. Մարգարյանը և այլոք:

Մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ի Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր **Վ. Բրուտյանը** նշեց, որ ճիշտ կլիներ, որպեսզի ուսումնական գծով փոխտնօրենը անվանափոխվի ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրենի, քանի, որ նրա ենթակայությամբ է նաև Գիտակազմակերպական բաժինը, ճիշտ կլինի նաև ֆակուլտետի ենթակայությամբ ունենալ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն, որը որոշակի ֆինանսական ներդրումների չի պահանջում:

ՄԿՊԿ բաժնի վարիչ բ.գ.թ., դոցենտ **Վ. Աղաբաբյանը** նշեց, որ միայն պրակտիկայի պատասխանատուն չի կարող ամբողջ պրակտիկայի գործընթացը արդյունավետ կազմակերպել, լավ կլիներ այդ ուղղությամբ գործեր բաժին:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ. պրոֆեսոր **Մ. Միքայելյանը** նշեց, որ կառուցվածքում չկա նշված ‹‹Ակունք››-ը:

Գ. Սիմոնյանը նշեց, որ կարելի է նաև ստեղծել գերազանցության կենտրոններ:

Որոշեցին

Որոշում 31/6

1. Վերանայել ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքը՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկները և ներկայացնել քննարկման հաջորդ գիտական խորհրդի նիստում:

5.3 Լսեցին -«Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (հավելված 5) կազմվել է մեր որոշ հարգարժան աշխատակիցների կողմից, առաջնորդվելով ԵՊՀ-ի համապատասխան կարգով, մոտ մեկ ամիս առաջ ուղարկվել է ԵՊՀ ԻՄ-ի ամբողջ պրոֆեսորադասախոսական կազմին, եղել են կառոցողական առաջարկներ որոնք նույնպես հաշվի են առնվել այս կարգում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ. պրոֆեսոր **Մ. Միքայելյանը**, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՀԼԳ ամբիոնի դոցենտ Ա. Սարհատյանը, ուսումնամեթեդական վարչության պետ Ա. Դավթյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտեի դեկանի պաշտոնակատար բ.գ.թ. դոցենտ Վ. Ավագյանը:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ. պրոֆեսոր **Մ. Միքայելյանը** նշեց, որ ճիշտ կլիներ տարբերակել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման համար նախատեսվող վճարները, ինչպես նաև

ուսանողների կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարման համար վճարվեն նաև ԵՊՀ ԻՄ-ի ոչ հիմնական աշխատողներին:

Տնօրենի խորհրդական **Ա. Մակարյանը** նշեց, որ լրավճարների համար բավականին մեծ գումար կպահանջվի և անհրաժեշտ է նաև այս կարգը ընդունելուց առաջ համաձայնեցնել ԵՊՀ-ի ռեկտորի հետ:

Ա. Դավթյանը անհամաձայնություն հայտնեց հիշյալ կարգի 3.3 կետի հետ և առաջարկեց վերանայել:

Որոշեցին

Որոշում 31/7

1. «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը» վերանայել հաշվի առնելով նշված դիտողությունները:
2. Վերջնական տարբերակը ներկայացնել հաստատման ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հերթական նիստում:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ